ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 179 – Ա **13 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի «Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմ ստեղծելու մասին» N 223-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը՝ աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմի կազմը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի

2) որոշման 2.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2.1. Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմի գործունեության համակարգումը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին»:

13.05.2020

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի մայիսի 13 - ի
N 179 - Ա որոշման

«Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2012 թ. հոկտեմբերի 30 - ի
N 223 - Ա որոշման

ԿԱԶՄ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄԻ

Թիմի ղեկավար՝
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության
Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ
Թիմի անդամներ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ, **քարտուղար**
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության
վարչության պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և
հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և
վերլուծության բաժնի պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի պետ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության
բաժնի պետ»:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

13.05.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ